

• **դերերի բաշխումը:**

Մարդկային ռեսուրսների կառավարման բնագավառում մկարագրված են մի շարք ռազմավարական մոդելներ, որոնցից առավել ճանաչված են՝ կազմակերպության պահանջումներին վրա հիմնված ռազմավարության մոդելը, ռազմավարական համապատասխանության մոդելները, ռազմավարական համապատասխանության և ճկունության մոդելները, ռազմավարական «փոխկապակցման» մոդելները:

Գոյություն ունեն մեկ մի շարք ռազմավարական մոդելներ, որոնց հիմքում ընկած են կազմակերպության կենսասցիկլի փուլերին համաձայնեցման, լրացուցիչ արժեքների ստեղծման, մրցակցային առավելությունների և այլ սկզբունքներ: Յուրաքանչյուր կազմակերպություն կարող է իր սեփական ռազմավարությունը մշակելիս օգտվել համաշխարհային փորձից, սակայն մինչ այդ մա պետք է ուսումնասիրի և վերլուծի այն բոլոր գործոնները, որոնք ազդում են մարդկային ռեսուրսների կառավարման արդյունավետության վրա:

Մարդկային ռեսուրսների ձևավորման և կառավարման վրա ազդում են մեկ մի շարք գործոններ, որոնք որոշում են կազմակերպության այն արտաքին միջավայրը, որտեղ ձևավորվում է մարդկային ռեսուրսների կառավարման քաղաքականությունը: Սկզբունքորեն դրանք այն գործոններն են, որոնք ձևավորում են կառավարման բնագավառի յուրաքանչյուր ոլորտ, միայն այն տարբերությամբ, որ ավելի են սոցիալ-հոգեբանորեն կողմնորոշված և ուղակիորեն կապված են ազգային մենթալիտետի հետ: Այդ գործոններն են՝ ազգային առանձնահատկությունները, կորպորատիվ կուլտուրան, գեներացիան, պատմական, կրոնական, սոցիալական, սոցիալ-հոգեբանական, իրավական, աշխարհագրական, տնտեսական, տեխնիկական և գլոբալիզացիայի գործոնները:

Առանձին հետազոտման առարկա են արտաքին և ներքին միջավայրերի ազդեցության գործոնները:

Մարդկային ռեսուրսների կառավարման արդյունավետությունը կախված է մեկ մի կրոնականարդակում լուծվող մի շարք հարցերից: Դրանք են.

1. Մարդկային ռեսուրսների անհատական և խմբային ամբողջ ներուժի օգտագործման շնորհիվ կազմակերպության գործունության, գոյատևման և մրցունակության արդյունավետության բարձրացում:
2. Մարդկային ռեսուրսների ինքնահարգանքի, ինքնագնահատման մակարդակի բարձրացում, համագործակցություն և վարչական ու վարձու աշխատողների միջև փոխըմբռնման մթնոլորտի ապահովում:
3. Գծային մենեջմենթի արհեստավարության բարձրացում՝ մարդկային ռեսուրսների խոր գիտելիքների ուսուցման հաշվին:
4. Մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի մասնագետների դերի և մասնագիտական մակարդակի բարձրացում:

Մարդկային ռեսուրսների ձևավորման և կառավարման արդյունավետությունը կազմակերպություններում կախված է նշված գործոնների բացահայտումից, նրանց փոխազդեցությունից և համատեղ կիրառումից: Սակայն այս հիմնախնդիրների լուծման գործընթացում առաջ են գալիս մի շարք խոչընդոտներ, որոնցից ամենակարևորներն են.

- ղեկավարների ոչ լուրջ վերաբերմունքը մարդկային ռեսուրսների կառավարմանը՝ որպես գիտություն,
- աշխատուժի շուկայում հավասարակշռության բացակայումը,
- պետության սոցիալական քաղաքականությունը,
- քիզենսի փակվածությունը հետազոտությունների համար:

Այսպիսով, պարզ է դառնում, որ մարդկային ռեսուրսների կառավարման ռազմավարության հայեցակարգի մշակումը բարդ գործընթաց է, որը պետք է հաշվի առնի ազգային մենթալիտետը, ճյուղային առանձնահատկությունները, ամբողջ շարք գործոնների ազդեցությունը և արտասահմանյան երկրների դրական փորձը: Մյուս կողմից՝ կազմակերպությունների գործունեության տնտեսական արդյունավետությունը ուղակիորեն կախված է կառավարման համակարգի մակարդակից, որում գերակայությունը տրվում է մարդկային ռեսուրսներին: Ուստի այս հիմնախնդրից խուսափել հնարավոր չէ, այն արդիական է և պահանջում է լուրջ գիտական մոտեցում՝ կառավարման մոդելների մշակում՝ հաշվի առնելով մկարագրված բոլոր պահանջները:

ԱՐՇԱԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան

տնտեսագիտության ինստիտուտի հայցորդ

ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԵԽԱՆԻԶՄԻ ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Շրջակա միջավայրի պաշտպանության հիմնախնդիրները, ակնհայտորեն, պահանջում են կառավարման բոլոր մակարդակներում բնապահպանական քաղաքականության հստակ նպատակների մշակում: Այդ համատեքստում խիստ կարևորվում է բնօգտագործման ոլորտում ծագող հարաբերությունների առանձնահատկությունների բացահայտումը և կանոնակարգումը:

Ընդհանուր առմամբ, բնօգտագործման տնտեսական մեխանիզմի ուսումնասիրությունը ենթադրում է շրջակա միջավայրի պաշտպանության հետ կապված խնդիրների տեղափոխում տնտեսական հարթություն: Ինչը, ըստ էության, օրինաչափ է՝ հաշվի առնելով շրջակա միջավայրի և տնտեսական համակարգի գործունեության միջև գոյություն ունեցող հետադարձ կապը: Ակնհայտ է, որ բնական պաշարների ոչ արդյունավետ օգտագործումը, նախ և առաջ, պայմանավորված է տվյալ շուկայի առանձնահատկություններով: Մասնավորապես, դրանցից կարելի է նշել հետևյալները.

- բնության շատ բարիքների համար գոյություն չունի հատուկ շուկա,

- դրանցից շատերը անբաժանելի են, չեն կարող դասվել մասնավոր բարիքների շարքին, իսկ հասարակական բարիքների առաջարկով շուկան չի զբաղվում,
- որոշ բարիքների օգտագործումն ուղեկցվում է արտաքին էֆեկտների ազդեցությամբ, ինչի հետևանքով դրանց շուկայական գնի հիմքում կարող են դրվել մասնավոր (ոչ լրիվ) ծախսերը,
- հասարակությունն ամբողջությամբ չի կարող գնահատել (հատկապես դրամային տեսքով) բնության բարիքների օգտագործման հետևանքները: Այդ իսկ պատճառով, մասնավոր ապրանքների և ծառայությունների տեղաբաշխման առումով արդյունավետ գործող շուկայական մեխանիզմները ոչ արդյունավետ են գործում բնության բարիքների կտրվածքով:

Հայտնի է, որ շուկայական տնտեսության ինքնակարգավորումը, ի թիվս այլ մեխանիզմների, իրականացվում է գնային համակարգի միջոցով: Շուկայի խնդիրն է ռեսուրսների օպտիմալ տեղաբաշխումը տնտեսության մեջ՝ հավասարակշռված գների սահմանման միջոցով: Սակայն տվյալ խնդրի լուծումը շատ դեպքերում դառնում է գրեթե անհնարին այն պատճառով, որ հավասարակշռված գների ձևավորումը, մի շարք արտաքին գործոնների ազդեցության ներքո, խաթարվում է:

Արտադրատեխնոլոգիական և գիտատեխնիկական զարգացման ներկա փուլում, ակնհայտորեն, բնօգտագործման գործընթացի պետական կարգավորման և դրա իրականացման համապատասխան մեխանիզմների ներդրման անհրաժեշտություն է առաջացել: Բնօգտագործման պետական կարգավորման մեխանիզմը վարչական-իրավական և տնտեսական միջոցների և լծակների համակարգ է՝ պետական մարմինների կողմից բնական ռեսուրսների օգտագործման, վերարտադրության և պահպանման գործընթացների վրա համապատասխան ներգործություն ունենալու և անհրաժեշտության դեպքում համապատասխան միջամտություն հանդես բերելու համար:

Պետք է նշել, որ բնապահպանական խնդիրների խորացմանը զուգընթաց, 60-ականներից բնապահպանության պետական կարգավորումը հիմնված էր հիմնականում վարչական-իրավական մեթոդների կիրառման վրա: Սակայն, շրջակա միջավայրի պահպանության ուղղությամբ կատարվող ծախսերի ավելացմանը զուգընթաց, դրսևորվեց այդ մեթոդների ցածր արդյունավետությունը, գիտա-տեխնիկական առաջընթացի արդյունքների նկատմամբ բնապահպանության ոլորտի թույլ ընկալունակությունը, բնապահպանության «ուժային» մեթոդների անբավարարությունը և տնտեսական խթանների համակարգի միջոցով դրանց ուժեղացման անհրաժեշտությունը: Արդյունքում, նշվածները ազդակ հանդիսացան բնօգտագործման տնտեսական մեխանիզմի ստեղծման համար:

Ընդհանուր առմամբ, բնօգտագործման կարգավորման տնտեսական մեխանիզմի ներգործության օբյեկտ են հանդիսանում տվյալ ոլորտում ծագող տնտեսական հարաբերությունները: Կախված գործունեության տեսակից, այդ հարաբերությունները տարանջատվում են հետևյալ տեսակների.

- պետության, տեղական ինքնակառավարման մարմինների և տնտեսավարող սուբյեկտների միջև՝ բնական պաշարների սպառման նպատակով,
- պետության և տնտեսավարող սուբյեկտների միջև՝ շրջակա միջավայրի պահպանության նպատակով,
- պետության, տեղական ինքնակառավարման մարմինների և տնտեսավարող սուբյեկտների միջև՝ բնական պաշարների և ռեսուրսների վերարտադրության նպատակով,
- միջպետական հարաբերություններ՝ բնական հարստությունների օգտագործման և շրջակա միջավայրի կենսապահովող որակների պահպանության նպատակով:

Հարկ է նշել, որ տնտեսական զարգացման ներկա փուլում սեփականատիրական հարաբերությունները քափանցել են նաև բնօգտագործման ոլորտում ծագող տնտեսական հարաբերությունների դաշտ: Այս առումով, տարբեր մասնագետների մոտ գերիշխող է այն տեսակետը, որ շրջակա միջավայրի պաշտպանության մի շարք հիմնախնդիրներ կարող էին առավել օպերատիվ կերպով լուծվել բնության բարիքների նկատմամբ սեփականության իրավունքի համարժեք կիրառման դեպքում: Արևմտյան գրականության մեջ առանձնացվում են սեփականության իրավունքի 4 տեսակներ՝

- սեփականության բացառիկ իրավունք՝ բնական պաշարների տեղաբաշխման, վերացման և վաճառքի իրավունք: Սակայն անգամ մման իրավական կարգավիճակը կարգավորվում է օրենքով՝ այլոց իրավունքների պաշտպանության նպատակով,
- ֆունկցիոնալ սեփականություն, երբ մի շարք իրավունքներ վերաբերվում են որոշակի խմբերի (այս դեպքում, որպես կանոն, ռեսուրսների օգտագործման իրավունքը չի կարող փոխանցվել այլ խմբի),
- հասարակական բարիքների օգտագործման իրավունք,
- բնության բարիքների նկատմամբ հասարակական սեփականություն (այլ սեփականության փաստացի բացառում):

Սեփականության իրավունքն իր մեջ ներառում է՝

- որոշակի նպատակներով բնական ռեսուրսների օգտագործման մի շարք կանոններ,
- այլ անձանց կողմից ռեսուրսների օգտագործումը կանխարգելող իրավունքներ (սեփականատիրոջ իրավունքների պաշտպանություն),
- պաշարների նկատմամբ իրավունքների վաճառքի իրավունք:

Իրավական տեսանկյունից խնդիրը կայանում է շրջակա միջավայրի բարիքների և բնական պաշարների նկատմամբ տնտեսավարող սուբյեկտների սեփականության իրավունքի ամրագրման և դրանց օգտագործման սահմանված կարգի վերահսկողության մեջ: Հիմնական դժվարությունն այստեղ կայանում է նրանում, որ շրջակա միջավայրի շատ բարիքներ չեն համապատասխանում մասնավոր բարիքներին ներկայացվող չափանիշներին:

Տնտեսական տեսանկյունից բնապահպանական հիմնախնդիրների և սեփականության կառուցվածքի միջև փոխկախվածությունը նույնպես բավականաչափ բարդ է, որի էությունը հանգում է շրջակա միջավայրի պաշտպանության կառավարման սուբյեկտին: Այս դեպքում գոյություն ունեն երկու ծայրահեղ տարբերակներ.

- մասնավոր սեփականության լիակատար գերիշխանություն, տնտեսական կյանքին, այդ բլում կառավարմանը և բնապահպանա-տնտեսական հարաբերություններին պետության միջամտության բացակայություն,
- մասնավոր սեփականության լրիվ բացակայություն, պետական «համաժողովրդական» սեփականության գերիշխանություն:

Քանի որ գոյություն ունեն սեփականության երկու հիմնական տեսակ՝ մասնավոր և պետական սեփականությունը, իսկ մնացածը մասնավոր սեփականության տարատեսակ են, ապա դրանց հարաբերակցությանը են կանխորոշվում բնապահպանական գործունեության կառավարման տեսակները և մեթոդները, տնտեսական գործընթացներին և, ընդհանրապես, բնապահպանական-տնտեսական հարաբերություններին պետության միջամտության մասշտաբները: Ինչքան մեծ է պետական սեկտորը, այնքան մեծ է վարչական լծակների մասնաբաժինը, իսկ կառավարման ոճն առավել ավտորիտար է: Եվ ընդհակառակը՝ մասնավոր սեկտորի գերակայությունը սահմանափակում է պետության միջամտությունը տնտեսության մեջ մինչև այն մակարդակը, երբ միայն պետական կարգավորումն է հանդես գալիս առավել շահեկան հասարակության համար:

Բնօգտագործման տնտեսական մեխանիզմն իր մեջ ներառում է բնօգտագործման կարգը սահմանող տնտեսական մեթոդների համակարգը: Դրանց գլխավոր առանձնահատկությունը կայանում է շրջակա միջավայրի պաշտպանության արդյունավետ խթանների ստեղծման մեջ: Ընդ որում, բնօգտագործողը պետք է ունենա բնապահպանական քաղաքականությամբ սահմանված շրջանակներում ճկուն գործելու և շրջակա միջավայրի պաշտպանության պահանջներին արդյունավետ կողմնորոշվելու հնարավորություն՝ ստանալով ֆինանսական առավելություններ շրջակա միջավայրի նկատմամբ բարյացակամ վերաբերմունքի դրսևորման համար կամ ֆինանսական սանկցիաներ՝ ոչ բարեհաճ վերաբերմունքի դեպքում: Այս համատեքստում կարևորվում է մեթոդների այնպիսի համակարգի ստեղծումը, որի յուրաքանչյուր տարրը կուժեղացնի, այլ ոչ թե կթուլացնի մյուսների գործողությունը: Ինչ վերաբերում է հիմնական չափանիշներին, ուղղություններին և կարգին, ապա դրանց սահմանման իրավասությունը բացառապես պատկանում է պետությանը:

Հաշվի առնելով բնապահպանական հիմնախնդիրների խորությունը, բնօգտագործման ոլորտում շուկայական հարաբերությունների զարգացման ցածր աստիճանը, հանրապետության արդյունաբերության ներկա կառուցվածքը և տնտեսական պայմանները, կարծում ենք, որ պետք է նախապատվությունը տրվի բնօգտագործման խառը տիպի տնտեսական մեխանիզմի ստեղծմանը, որն իր մեջ կմիավորի խթանող և կոշտ կարգավորման գծերը: Դա նշանակում է, որ տվյալ մեխանիզմը, մի կողմից՝ պետք է խթանի էկոլոգիական առումով հավասարակշռված և մաքուր արտադրությունների և գործունեության տեսակների զարգացումը, իսկ մյուս կողմից՝ խոչընդոտի աղտոտող գործունեության տեսակները:

Բնօգտագործման տնտեսական մեխանիզմի վրա ազդող գործոնները բաժանվում են երկու խմբի՝ տնտեսական և ոչ տնտեսական: Ակնհայտ է, որ առաջինները որոշիչ ազդեցություն են ունենում տնտեսական մեխանիզմի գործունեության արդյունավետության վրա: Այս առումով, որոշակի ուսումնասիրության է արժանի ոչ տնտեսական գործոնների ազդեցությունը:

Անգամ ամենաարդյունավետ տնտեսական մեխանիզմի մշակումը դեռևս չի ենթադրում դրա մեխանիկական կիրառում պետական կարգավորման պրակտիկայում: Նախ և առաջ, պետք է լուծվի դրա օրենսդրորեն ամրագրման խնդիրը: Ընդ որում, պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ տնտեսական որոշումների կայացման վրա ազդում է քաղաքական մեխանիզմը: Տնտեսական մեխանիզմի կենսունակության վրա էական ազդեցություն ունի նաև գործնական կիրառման խնդիրը, հատկապես օրենսդրական և այլ իրավական ակտերի պահանջների կատարման առումով:

Բնօգտագործման տնտեսական մեխանիզմի գործունեությունը սերտ կապված է տնտեսավարող սուբյեկտների գործունեության տնտեսական տարածքի սահմանափակումների հետ և, այդ իսկ պատճառով, շատ կարևոր է ինչպես բնակչության և տնտեսության սուբյեկտների, այնպես էլ պետական մակարդակով որոշումներ ընդունողների մոտ շրջակա միջավայրի պաշտպանության անհրաժեշտության ընկալման խնդիրը:

Պետք է նշել, որ բնօգտագործման տնտեսական մեխանիզմը կարող է ազդել արտադրանքի մրցունակության վրա ոչ միայն երկրի ներսում, այլ նաև համաշխարհային շուկայում: Այս համատեքստում կարևոր նշանակություն է ձեռք բերում շրջակա միջավայրի որակի ստանդարտների նույնացումը և դրա պաշտպանության միջոցառումների հարմոնիզացիան: Միայն այդպես կարելի է խուսափել միջոնգիտնալ և միջազգային մակարդակներում մրցակցության խեղաթյուրման վտանգից և էկոլոգիական դեմայինգից: Վերջինիս իրենից ներկայացնում այնպիսի պետական քաղաքականություն, որի միջոցով կանխատեսված կերպով բնապահպանական ցածր պահանջների և դրա հետևանքով արտադրության փոքր ծախսերի միջոցով այլ պետությունների հաշվին ներքին արդյունաբերության համար ստեղծվում է մրցակցային առավելություն և խթանվում է էկոլոգիապես ոչ մաքուր ձեռնարկությունների ստեղծումը: Էկոլոգիական քաղաքականության հարմոնիզացիան պետք է ապահովվի այն մակարդակով, որն անհրաժեշտ է այլ պետությունների վրա բացասական ազդեցությունների կանխարգելման և վերացման համար: Տվյալ դեպքում անհրաժեշտ է միջազգային պարտավորությունների սահմանում, որոնք կխոչընդոտեն չհաշվարկված էկոլոգիական վնասի ձևով թաքնված սուբսիդավորմանը: Այս դեպքում պետությունն ինքնուրույն կկրի իր քաղաքականության էկոլոգիական հետևանքներն առանց արտաքին էֆեկտների առաջացման, որոնք տնտեսության բնագավառում դրսևորվում են, նախ և առաջ, միջազգային շուկայում մրցակցային դիրքերի թուլացման ձևով: